է Հաքստհաուզէն, «հայ գիւղացու վրայ, որ ըստ ամենայնի ազնիւ է, առաքինի ու հաւատարիմ: Դեռ եւս ճամբորդ Թուրնըֆորը, (Tournefort) որ անձամբ չփման մէջ էր մտել Հայաստանի երկրագործների հետ, գովում է այդ հայերին՝ որպէս «աշխարհի ամենալաւ, ամենազգնիւ մարդիկը»: Ի դէպ լսեցի ես, որ տաճկական տիրապետութեան տակ գտնուող հայ գիւղացի ժողովուրդը Բայազիտում, Էրզրումում, Վանում — աւելի եւս լրջմիտ է, ազնիւ, առաքինի ու վարք ու բարքով աւելի խիստ, քան՝ Երեւանի կողմերի ժողովուրդը»:

Նոյն հատուածի ծանօթութեան մէջ (Ա. 295) Հաքստհաուզէն չեշտում է հայ ազգի այդ երկու՝ վաճառական եւ գիւղացի դասակարգերի նկարագրի մէջ եղած «տարօրինակ ներհակութիւնները», անդամ՝ Կ. Պոլսում, Զմիւռնիայում եւ «դերման բուժավայրերում» հանդիպած ու իր հայրենիքում ապրող, օրինակ՝ Երեւանի հայ վաճառականի նկարագրի միջեւ եղած տարբերութիւնը: «Ի՞նչպէս բոլորովին այլ է պատկերը՝ հայրենի երկրում, Հայաստանի՛ մէջ: Հէնց օրինակ Երեւանի վաճառականնե՛րը քիչ է պատահում որ դուրս գան իրենց քաղաքից. շատ-շատ՝ նրանք ծանօթ են շրջականների առեւտրաշահ վայրերին, իսկ Թիֆլիսից, Թաւրիզից, Էրզրումից հեռու արդէն՝ երբեք չեն գնում: Բուն գիւղացիները, ընդհակառակը, իրենց տունն ու տեղը թողնում են միայն այն ժամանակ, երբ օրինակ ուխտի են գնում»:

Այսպիսի նկարագրի տէր, ինչպէս եւ «մըտաւորապէս շատ ընդունակ» (Ա. 304) հայ ժողովուրդի պատմական-բաղաքակրթական առաքելութիւնն է համարում Հաքստհաուզէն, ինչպէս տեսանք արդէն յօդուածիս առաջին գլխում, Ասիայի ու Եւրոպայի միջեւ միջնորդ լինել:

«Կարելի է — ասում է Հաքստհաուզէն — հայերին բնորոշել որպէս թ-թխմոր՝ դրուած Ասիայի եռուն տարրերի մէջ, վերազարթեցնելու համար նրա հոգեկան կեանքի գրեթէ մեռած սաղմերը»:

* * *

Հայ ժողովրդի ընկերային խաւերի մասին եւս առատ ծանօթութիւններն ենք ստանում Հաքստհաուզէնի աշխատութիւնից:

Մենք տեսանք արդէն, թէ նա ի՛նչ ասաց հայ գիւղացու եւ վաճառականի մասին: Ինչ վերաբերում է ազնուական դասակարգին, այդ մասին նա հետեւեալն է ասում.

«Այժմ կան մի քանի (հայ) իշխանական եւ մելիքական ընտանիքներ... Նրանք, ինչպէս լսեցի, Ռուսաստանի կողմից ճանաչուել են որպէս ազնուականներ» (Ա. 96):

Համեմատելով իրար հետ վրացիների եւ հայերի ընկերային կազմը եւ բաժանումները, Հաքստհաուզէն կատարեալ հակասութեան մէջ է դնում նրանց իրար հետ (Ա. 189, 217).

«Ամէն տեղ վրացական երկիրներում իշխում են աւատական բաժանումներ եւ կազմ: Թագաւոր, իշխան, ազնուական, գիւղացի, ամէնքը միեւնոյն շղթայի մէջ՝ իրարուց կախուած են: Իսկ հայերի մէջ իշխում է վարիցվեր նահապետական կազմ ու յարաբերութիւն, նրանք ունին ընտրովի գիւղապետներ: Ամէն ինչ, որ ունի կարեւոր նշանակութիւն, վճռահատութեան է ենթարկւում համայնքի ժողովներում, որոնցից մինչեւ իսկ իշխաններն են ակնածում: Չկան իսկական ազնուականներ, ինչպէս եւ՝ գիւղացիների աւատական պարտականութիւններ»:

Եւ այսպէս, «հայ ժողովուրդի մէջ նկատելի չէ իրաւական դասերի (Staende) խտրութիւն կամ ներհակութիւն: Ընդհանրապէս կարելի է ասել, որ հակառակ վրացիների՝ ըստ ամենայնի աւատական կազմակերպութեան, հայ ժողովուրդի ներքին կազմակերպութիւնը հիմնուած է օրգանակ-ռամկավար սկզբունքների վրայ: Գոյութիւն չունի քաղաքի ու գիւղի, քաղաքացու եւ գիւղացու ներհակութիւն». (Տե՛ս նաեւ՝ Ա. 164):

Քաղաքներում ապրողների բաղդատական մեծամասնութիւնը զբաղւում է առեւտրով եւ արհեստներով, գիւղերում՝ հողագործութեամբ: Միայն շատ չնչին թուով պատուաւոր ընտանիքներ կան, այսպէս կոչուած թարխաններ, (ազատներ), որոնք միայն պատուոյ իրաւունքներ ունին, մէկ էլ՝ տուրքերից ազատ են: Այդպիսի մի երկու ընտանիքներ, որոնց շարքում եւ Արովեանների՝ ե-